

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2017թ. նոյեմբերի 21 -ի
նիստի /արձ.3/

1. Ատեստավորել հեռակա ուսուցման համակարգի ասպիրանտներ Անի Լիպարիտի Տեր-Շովհաննիսյանին և Արթուր Տիգրանի Վարդիկյանին,

1.1 2016-2017 ուս. տարում կատարած աշխատանքի հիման վրա ասպիրանտ Անի Լիպարիտի Տեր-Շովհաննիսյանին փոխադրել ուսումնառության 3-րդ կուրս,

1.2 2016-2017 ուս. տարում կատարած աշխատանքի հիման վրա ասպիրանտ Արթուր Տիգրանի Վարդիկյանին փոխադրել ուսումնառության 4-րդ կուրս:

2. Հաստատել «ԵԹԿՊԻ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում»-ում փոփոխություն կատարելու առաջարկը,

2.1 «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողական նպաստների,

պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի

2.1.1 2-րդ բաժնի 2.4 կետի բոլոր ենթակետերից հանել «և բակալավրիատում 75%, մագիստրատուրայում 80% ՄՈԳ-ի շեմը հաղթահարած» բառերը:

2.1.2 3-րդ բաժնի 3.7 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3.7 «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների համաձայն, բուհի վճարովի համակարգի ուսանողական համակարգի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը՝ ՄՈԳ-ը բակալավրիատում՝ նվազագույնը 3.30, մագիստրատուրայում՝ 3.40 (բացառությամբ սույն կետի «է») ենթակետի, որի դեպքում ՄՈԳ-ը հաշվի չի առնվում և «թ») ենթակետի, որի դեպքում ՄՈԳ-ը թե՛ բակալավրիատում և թե՛ մագիստրատուրայում սահմանվում է 3,60), և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում սույն կետով ամրագրված կարգավիճակ ունեցող ուսանողներին»:

2.1.3 3-րդ բաժնի 3.11 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3.11 Սույն կանոնակարգի 3.7 կետի համաձայն՝ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքներին հաջորդող չորս շաբաթների ընթացքում՝ բացառությամբ 3.7 կետի «է») և «թ») ենթակետերով սահմանված կարգավիճակների, երբ համապատասխան դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հաջորդող չորս շաբաթների ընթացքում»:

3. Արձանագրել, որ Կերպարվեստի և անիմացիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

3.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արդյունքները,

3.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա Դավիթ Յուրիի Մինասյանը ձայների մեծամասնությամբ (27 կողմ, 3 անվավեր) ընտրվել է Կերպարվեստի և անիմացիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

Առաջարկել ռեկտորին Դ. Մինասյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն «ԵԹԿՊԻ-ի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ի 40-րդ կետի:

4. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1 հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

4.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ) ենթակետի համաձայն Նունե Կառլենի Վարդանյանին ձայների մեծամասնությամբ (19 կողմ, 9 դեմ, 2 անվավեր) շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել Գիտական խորհրդի որոշումը:

5. Թատրոնի ֆակուլտետում «Գրիմ» առարկայի դասավանդման որակը բարելավելու, մեկ տարի անվճար վարպետության դասեր անցկացնելու և նյութական ներդրում կատարելու համար Մարո Փայլյանին պարգևատրել ինստիտուտի «Մեկենաս» մեդալով:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան